

LIPANAN

Journal Arménien

POLITIQUE - LITTÉRAIRE

RÉDACTION - ADMINISTRATION

Place des Canons, 9, Rue d'Italie

BEYROUTH «Liban»

DIRECTEUR-PROPRIÉTAIRE

J. ADJEMIAN

ԼԻԲԱՆԱՆ

Ազգային - Քաղաքական - Գրական
ԱՆԿԱԽ ՀԱՅԱԹԵՐԹ

(لبنان) جريدة ارمينية سياسية ادبية اقتصادية حرة

ՇԱԲԱԹ

14

ՄԱՐՏ

1931

Բ Ա Ժ Ն Ե Գ Ի Ն

ՍՈՒՐԻԱ—	Տրիգ.	Վեցամս.	Շաբաթ.
	360	175	125
ԼՐՏԱՍՈՒՄԱՆ	6	4	2 Տօլար

ՆՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅ ՄԱՍՈՒԼԸ ԵՒ ԻՆՔՆԱՀԱՇՈՒԵՏՈՒԹԻՒՆ

Մամուլը հանրութեան հոգին է:

Առանց մամուլի ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐՆԻՔ գոյութիւն չունի:

Մամուլով չհետաքրքրուողները, մարդկային ընկերակցութեան հետ կապ և մասնակցութիւն չ'ունին և դուրի են տարրական դատողութենէ — ինչ որ՝ հանրութեան կը վերաբերի:

Հայ մամուլը — դժբախտաբար —, առաւել եւս կոչուած է հանրութեան խղճի գոհ դառնալ և ապարդիւն տեղը ինքնասպան միջոցներով միայն յա-գուրդ տալ իր հանրային զգացումներուն:

Հազար գանկեր կը ճգնին ու կը տքնին ցեղ մը ապրեցնելու համար, և կամ, ցեղին գոյատեւութիւնը ապահովելու մտօք լայց, իսկապէս ան-գամներ տեսած ենք որ, տարուած այգորինակ աշխատանքները իզուրի են անցած երբ, այդ աշխատանքին մէջ մամուլը դեր ունեցած է:

Հայ ժողովուրդը շահակրատող է միայն. երբ գործելու կարգը գայ, մեզմէ աւելի ծոյլեր չ'իկան:

Ահաւասիկ փաստացի օրինակ մը: Սակայն ուշադրութեամբ մտիկը Ը-նենք մենք զմեզ:

«Լիբանան» վեց տարիէ ի վեր լոյս կը տեսնէ ԱՆՀԱՏԱԿԱՆ ջանքերով: «Լիբանան»ի հրատարակութիւնը ապահովուած է անձնական զոհողու-թեամբ:

«Լիբանան» ու է կազմակերպութենէ չի հրատարակուիր:

«Լիբանան»ի ուղղութիւնն է՝ գործել՝ հայ ժողովուրդին համար, հայ ժողովուրդին հետ և հայ ժողովուրդով:

«Լիբանան»ի ընթերցողներուն թիւը, 2000-ը կ'անցնի, իսկ միայն թա-ժանորդներուն թիւն է՝ 1200:

Պարզ ճշմարտութիւն մը:

Ուրիշ հարիւր ընթերցողներ (այս քանը մեր հաշուով) սովոր են ձրի կարգով թիւթ մը, որ, բազմապիսի գծաւորութեամբ և անվերջ զոհողու-թիւններով կը հրատարակուի:

Գալով միայն բաժանորդներուն, դժբախտաբար, ստիպուած ենք Ը-սել թէ՛ անպարտաճանաչ են յաճախ և չին ուղեր առանց գիտումի, ինքնա-բերաբար, իրենց բաժանորդագիրը վճարել իր օրին, խնայել տալու համար մեր կողմէ թափուած աւելորդ աշխատանքներն ու յոգնութիւնները:

Մեր խօսքը միայն «Լիբանան»ի համար է: Մենք կը խօսինք ամբողջ հայ մամուլին համար, քանի որ, մօտէն տեղեակ ենք մեր պաշտօնակից-ներու կրած անշափ զրկանքներուն:

Բաւական է՝ միմիայն բաժանորդ ըլլալ հայ թերթի մը. աւելի կարե-ւորագոյնը կայ:

Ազգիկը հայ մարդոց ձրի քեթ կարգալը:

Ահաւասիկ մեր արգար պահանջը:

Աչքի լոյս կ'ապաւենք և մեր անխիղճ ընթերցողները հինգ վայրկեանէն և ՁՐԻՕՐԵՆ կ'ընթերցեն մեզ...:

Իրաւ է որ, կան բազմաթիւ հայ թերթեր, որոնք կարգաւ չ'արժեն, ու-րովհետեւ, ազգայինները հիմնուած են անհատական շահու վթայ. բայց մեր խօսքը այգորինակ թերթերու համար է:

Ամբողջիս ալ ծանօթ իրողութիւն մըն է, թէ հայ մամուլի, հայ հրա-տարակութեանց ազնուազոյն մասը, ընտրեալ շարքը, քաջալերանքէ զուրկէ: Թերթ մը — որպիսին «Լիբանան»ը — չ'քաջալերել, չ'օժանդակել անոր հրատարակութեան, առնուազն անխղճութիւն է:

«Լիբանան»ի համար հատուածական հակակշիռ գոյութիւն չունի, ինչ-պէս որ ըսինք, անիկա որդեգրած է այնպիսի ուղղութիւն մը՝ զոր՝ իւրա-քանիւր հայ պարտի ձայնակցիլ իրեն զրակասօրէն:

Այս ինքնահաշուետուութիւնը կ'ընենք կամովին՝ և մի՞նչ հպարտութեամբ ու ինքնագիտակցութեամբ:

Մեր ըսածներն ու խօսածները գուցէ խորդ ապաւորէ շատերուն, բայց իրողութիւնը այն է:

Մենք վստահ ենք որ, մեր պաշտօնակիցները մեզի կը ձայնակցին այս-օրինակ արգար զիտողութեան մը պահուն:

Մենք գիտենք և կը ճանչնանք այնպիսի ընթերցողներ, որոնք, հրա-պարակի վրայ ծանօթ են իւր ազգային կարեւոր անձնաւորութիւններ: Այս պատուականը՝ ընթերցողները ուստած են հայ թերթի քառորդ զահկան չը-վճառել և միշտ ձրի կարգալ:

Միթէ ներքի է մէկուն որ աննպատակ մասուններ կ'ընէ ու երբ կարգը հայ հրատարակման գայ, կը սրտնեղի ու կ'զգուշանայ ձեռքը գրպանը տանել:

Հանրօրոյտ ունէ ձեռնարկ, երբ կոչուած է հանրութեան համար ապրիլ, անհրաժեշտ է օր՝ հանրութենէ սնանի, օրպէսզի, կարիք ըլլայ կարճ ժա-մանակամիջոցի մէջ զայն աճեցնել ու զարգացնել:

Մենք լրբայն ենք որ, մեր ժողովուրդը ինչպէս ուրիշ անգամներ, անգամ մը եւս սթափուի և իր մէջ աւելի բուռն կերպով աճեցնել ըն-թերցաւորութեան ոգին և չ'խնայէ թէ՛ բարոյական եւ թէ՛ նիւթական ա-ջակցութիւնը հայ մամուլին համար:

ԹՐԲԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԿԱԶԻ ԵՒ ԻՍՄԵԹ ՓԱՇԱՆԵՐՈՒՆ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս տրուեցաւ լուծման որոշումը

Էնկիւրի.— Կայարանին մէջ մեծ շուքով ընդունուելէ յետոյ, Կազի փաշան զնաց իսմէթ փաշայի ապարանքը և ատեն մը տեսակցեցաւ վար-չապետին հետ: Յետոյ իր ապարանքը մեկնեցաւ և հոն կանչեց Ազգ. Մեծ Ժողովի նախագահը: Իսմէթ փաշան ալ Գործադարներու խորհուրդը Նիստի հրաւիրեց:

Ժամը 17-ին, իսլաքի Կեդր. վարչութիւնը և իր իսլաքի խորհրդարնա-կան հատուածի վարչական ժողովը խառն նիստ գումարեցին: Կազի փա-շան ալ ժողովին հկաւ, և յայտնելէ վերջ թէ ժողովուրդը ամէն կողմ իսլա-քի հետ է, աւելցուց թէ յարմար է նոր ընտրութեան ձեռնարկել, որպէսզի կարենայ իր խօսքը ըսել:

Ժողովը ընդհանուր կերպով հաւանութիւն յայտնեց այս տեսակէտին: Կուսակցութեան խորհրդարանական հատուածի այսօրուան նիստին պիտի կարգադրուի Կազի փաշային մէկ գրութիւնը, և լուծման որոշումը պիտի հաղորդուի Ազգ. ժողովի վարչական նիստին:

Մինչեւ կուսակցութեան վարչութեան գումարուիլը, ոչ ոք լուր ունէր ժողովին լուծման մասին: Գումարումէն յետոյ, լուրը տարածուեցաւ եւ մեծ ազդեցութիւն գործեց էնկիւրիի մէջ:

Ազգ. ժողովին լուծումը կը նկատուի առաջին արդիւնքը Կազի փաշա-յին վերջին ուղեւորութեան: Խորհրդարանի շրջանակներուն մէջ այն կարծի-քը կը տրէ թէ այս որոշումը շատ տեղին է:

Սերպէթ կուսակցութեան կազմութենէն յետոյ, կարգ մը մարդիկ Ը-սին թէ իսլաք կուսակցութիւնը այլեւ չի վայելեր ժողովուրդին վստահու-թիւնը, և զրգուրութիւններ ընելով ուղեցին որ նոր ընտրութիւն կատարուի: Այս անգամուսն ընտրութիւնը ցոյց պիտի տայ ժողովուրդին տրամադրու-թիւնը:

* * * Խորհրդակցական ժողովին մէջ, Կազի փաշան յարմար գտաւ որ երեսփոխաններուն ամսական 500 օսկիէն 350ի զեղչուի, ինչ որ տարեկան 600,000 օսկի խնայողութիւն մը կը նշանակէ:

Հանր. Նախագահին Նամակը

Էնկիւրի.— Զիւմհիւրիէթ իսլաք կուսակցութեան խորհրդարանական հատուածը այսօր ժամը 14ին ժողով գումարեց թէքրետադի երեսփոխան ձէմիլ պէյի նախագահութեամբ: Կուսակցութեան ընդհ. փոխ նախագահ իսմէթ փաշա կարգաւ հետեւեալ առաջարկը, զոր նախագահ Կազի փաշան չ'զղած է իսլաք կուսակցութեան անգամներուն:

Էնկիւրի, 3 Մարտ 1931

ՃԻՒՄՀՈՒՐԻԵԹ ԽԱԼԻ ԿՈՒՄԱՆԿՑՈՒՄԵՆ
ՀԱՏՈՒԱԽԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՆ

Ինչպէս յայտնի է, վերջին ամիսներուն ջանք թափուեցաւ աննպատ-մ թնդորտ մը ստեղծելու իսլաք կուսակցութեան, երկրին Ազգ. ժողովին և կառավարական գործերու մէջ ունեցած վարչական և քաղաքական գոր-ծունէութեան դէմ:

Յնական է որ շատ մը թերթներ և պահանջներ գտնուին երկրի մը մէջ որ զարեւով անտեսուած է: Միւս կողմէ կասկած չկայ թէ կրնան գտնուիլ մարդիկ, որոնք զգուհ միան երկիրը ազատող արմատական քաղաքականու-թեան մը կիրարկումէն: Անոնք չ'տեսնելով և կամ տեսնել չուզելով բարձր սկզբունքները, աշխատեցան խառնակի և պղտորիլ անգին բոլոր մտածու-մներն ու զգացումները: Ասոր համար տեղ տեղ գործածուած միջոցները եւ պատրուակները ուշադրութեան արժանի են և հրահանգիչ. հակառակ ասոր, ժողովրդական զանգուածին ուղիղ տեսակէտը և զգացումը չ'խանգարուեցաւ:

Ամբողջ երկրին մէջ կատարած եռամսեայ քննութեանցս ըն. աջքին այս իրողութիւնը մօտէն և տեղին վրայ տեսայ. բայց և այնպէս գտնուած են մարդիկ, որոնք աչք գցած են իրականութեան առջև և ուզած են զայն տարբեր ձեով ներկայացնել: Ընդհ. համողումը այն է թէ, իմ կուսակցու-թեանս քաղաքականութիւնը ամէնէն ճիշդ և բարեբար է ազգին և երկրին համար, եւ թէ ազգը մեր կուսակցութեան հետէ:

Մեր կուսակցութիւնը ամէն ատեն վիճակի է ամէնէն կասկածոտ և վա-րանտ ակնարկներու առջև: Կատարուող վստահութիւնը զոր ազգը ունի իրեն հանդէպ: Նախ ասոր համար, յետոյ հասկնալու համար թէ ազգը որ աստի-ճան համաձայն է յառաջիկայ տարիներուն մեր կիրարկելիք միջոցներուն, յարմար կը նկատուի որ իմ նախագահած ձեւմունքիէ իսլաք կուսակցու-թեան երեսփոխաններուն ընտրութիւնը նորոգուի:

ՃԻՒՄՀՈՒՐԻԵԹ ԽԱԼԻ ԿՈՒՄԱՆԿՑ. ԸՆԴՀ. ՆԱԽԱԳԱՀ
ԿԱԶԻ Մ. ԲԵՄԱԼ

ԺԱՄԱՆԱԿԸ ԿԸ ՓՈԽՈՒԻ

Գրեց՝ ՏՕԲԹ. Յ. ԹՈՓՃԵԱՆ

Հաճոյքով կը ներկայացնենք «Լիբանան»ի ընթերցողներուն Տիար Տօքթ. Յ. Թոփճեանի գրած յետա-գայ խիստ շահեկան յօդուածը գրը-ւած՝ մասնաւորապէս «Կոչնակի ե-րեսնամեակին առթիւ»:

Լատինական առած մը կ'ըսէ Tempora mutatur et nos mu- tamur in illis (=Ժամանակները կը փոխուին և մենք ալ կը փոխ-ւինք անոնց հետ): «Հայաստան ի Կոչնակին ալ իր գոյութեան երեսուն տարիներու ընթացքին մեծամեծ ծա-ռայութիւններ մատուցանելով Հայ հրապարագութեան, Հայ գրակա-նութեան, Հայ կեանքին վճարած է իր տուրքը Գրօսօսին, Ժամանակի աստուծուն, հետզհետէ բարեփոխ-ւելով, հետզհետէ ճոխանալով եւ հասնելով այսօրուան կատարելու-թեան: Վերջին երեսուն տարիներու ընթացքին իրաւամբ հսկայական փո-փոխութիւններու ենթարկուած են և Հայ կեանքը, եւ միջազգային կեանքը: Անողոր ժամանակը մաշե-ցուցած ապանշած է կարգ մը հին զրուցիւններ ու պայմաններ եւ ա-նոնց աւերակներուն վրայ գրած է կեանքի նոր և հրամայողական պա-հանջներ: Երանի այն անհատներուն, համայնքներուն, ազգերուն, որոնք կեանքի այս նոր պահանջները ան-միջապէս կ'ըմբռնեն և ըստ այնմ ի-րենց կեանքը յարգարել և կազմա-կերպել գիտեն: Անոնք պէտք չուն-նին աւերիչ յեղափոխութեանց եւ ցնցումներու: Անոնք բնականոն զարգացումով և պատշաճեցումով զերազոյն ջանքերով և արդիւնաբեր աշխատանքով իրենց կենսունակու-թեան փայլուն ապացոյցները կու-տան և իրենց բարօրութիւնը կ'ապա-հովեն: Անոնք որ սակայն կոյր ու խուլ կը մնան ժամանակի պահանջ-ներուն և ազգայնութեանց հան-դէպ, յուսախաբութենէ յուսախա-բութիւն գլորտուելով վստաւոր, տկարացումի և ի վերջոյ ոչնչացումի կը դատապարտուին կեանքի անողոր պայքարին մէջ:

Ո՛վ կրնար երեսուն տարի առաջ մտածել, որ Դիտտուական հսկան ուր ցարական անսահման միապետ-ութիւնը և քարացեալ ուղղափառ եկեղեցին ձեռք ձեռքի տուած միա-նձան կ'իշխէին, ջարդ ու փշուր պիտի ըլլար և անոր վիթխարի ի-րաններուն ու կմախքներուն վրայ բոյն պիտի զնէին Համայնավարու-թիւնը ու Անաստուածներու միւս-թիւնը՝ ըլլալով «մայրաքաղաքի ինքնիւրը զիրար կը քաշեն» կ'ըսէ Ֆրանսա-կան առածը: Թարական բռնապետու-թեան տեղը կը գրաւէ բանտարկան բռնապետութիւնը հսկայական արեւ-նայեղ յեղափոխութեամբ մը, որուն աւերիչ ոյժը ո՛չ միայն Ռուսիոյ ա-հաւոր փառանք կը պատճառէ այլ նաեւ կ'ապառնայ համաշխարհային խաղաղութեան, տիրող լուկերային կարգերուն: Ո՛վ կրնար երեսնակի տակից երեսուն տարի առաջ, որ կայտառ ու առոյգ Գիւրմանիւն, որ գիտութեան, արդիւնաբերութեան, առեւտուրի, զեղարուեստի եւ աւանգարդի մտքգեղեցիկ քանքի բո-ւ-

Կարգադրէ 4-րդ էջին վրայ «Վերջին Ժամ» հետաքրքրալից լու-բեր:

ՀԱՅԿ. ԿԵԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Փետրուար 14ին գումարուած է Հայաստանի Խորհուրդներու 7-րդ համագումարը: Համագումարը ունի Խորհրդարանի և նոյն ատեն սահմանադիր ժողովի հանգամանք: Օրակարգի վրայ կը գտնուին «Հայաստանի Ս. Ս. Հանրապետութեան Սահմանադրութեան փոփոխութիւնները և լրացումները» Ընտրութիւն կեդր. Գործադիր կոմիտէի, Միութեանական ազգութիւններու խորհուրդի անդամներու և համամիութենական խորհուրդներու համագումարի պատգամաւորներու:

ԴԱՍԱԾՈՒՅԻՆՆԵՐ

Երեւանի Գրական Միութեան նախաձեռնութեամբ, վերջերս կազմակերպուած են շարք մը դասախոսութիւններ, պետական հրատարակութեամբ լոյս տեսած գիրքերու շուրջ: Քննութեան առնուած են Ա. լազանի, Թոթովենցի, Մահարիի և Ն. Ջաբրանի գիրքերը: Յառաջիկային պիտի քննուին Նորենցի, Արմէնի, Տարոնցի և ուրիշներու երկերը:

Կրթական գործադրութեան նախաձեռնութեամբ մօտերս լոյս պիտի տեսնէ «Խ. Հայաստան»-ի արեւստը և նրա խնդիրները, պատկերազարդ էփոքրածրուած:

ԵՐԿՐԱՇԱՐԺ

Փետրուար 6-ին երկրաշարժի բաւական զօրութեամբ ցնցումներ եղած են Սիսիանի մէջ: Մարդկային կորուստ չկայ:

Նոյն ատուան Կորիսի մէջ, հինգ վայրկեան տեւող ընդհատ բայց զօրութեամբ ցնցումներ զգացուած են: Քանի մը շէնքերու վրայ ճնշուածներ առաջ եկած են: ուրիշ վրէժաւ չկայ:

ԱՄԵՐԻԿԱ

"LE LIBAN" ԵՒ ԸՆԹԻԻ

Ամերիկայի «Արմէնիա» թերթը արտասովոր մեր աշխատակից Օ. Դ. մէկ տեսութիւնը «Le Liban»-ի հրատարակութեան առթիւ, կ'աւելցնէ օրաժամերով անոր միտքերը կը շնորհաւորենք այդ ձեռնարկը և յաջողութիւն կը մաղթենք անոր գծուար լուծը կրող Պրն. Ժ. Անէմեանի:

ԵՐՈՂԱ

ՀԱՅ ԼԵՃՈՒԻ ԲԵՄ ԿԸ ՀԱՍՏԱՏՈՒԻ

«Բազմազգային» կը կարգանք. Պրն. Եսէյի համալսարանի մէջ է այդ, ուր ուսուցիչ նշանակուած է Փրոֆ. Արմէն:

Առանց խանդավառութեան չէ որ կը լսենք այս լուրը, քանի որ Փարիզէն յետոյ նոր մեծ կեդրոն մըն ալ մօտեն չփուռ ունենալով հայ լեզուին պիտի ծանոթանայ մեր մատենագրութեան, վերջապէս հայ մտքին ու հայ հնութեան գանձաբանին՝ հոգակելու զայն աշխարհի:

Մեր շնորհապարտ զգացումը Պրն. Զայասէր ազնիւ ժողովուրդին, ինչպէս նաև յատուկ շնորհաւորութիւններ յարգելի ուսուցչականին:

ՀԱՅ ՆՈՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐ

Ռուսներու Ուսանողական Միութեան հիմնադիր անդամներէն Պ. Պ. Երուանդ Սրապիոնեան և Պրն. Կարապետեան յաջողութեամբ աւարտած են Պուլժէի համալսարանին իրաւագիտական ճիւղը:

ՏԵՂԱԿԱՆ

Մ. ՀԷԼԼԵՕՒՆ ԺԱՄԱՆՈՒՄԸ

Մեր նախանցեալ թիւով գրած էինք թէ՛ Ռ. Բոմիսէրուսի խորհրդական Մ. Հէլլէօ Փրանսա մեկնած էր ամուսնանալու համար:

Մ. Հէլլէօ ընկերակցութեամբ իր ազնիւ տիկնոջ Պէյրուս վերադարձաւ:

Շնորհաւորելով Մ. Հէլլէօի ամուսնութիւնը բարի գալուստ կը մաղթենք:

Մ. ՏԵՊՊԱՍ ՄԵՍ ՍԵՐԱՅԻ ՄԷՋ

Մ. Տէպպաս Մեծ Ալեքս երթալով խորհրդակցութիւն մը ունեցաւ Մ. Բոմիսէի հետ առկա խնդիրներու շուրջ:

ԸՆՏՐՈՒԹԵԱՆՑ ԹՈՒԱԿԱՆԸ

Մեծ Սէրայի մէջ տեղի ունեցաւ խիստ կարեւոր ժողով մը որուն ներկայ էին Մ. Բոմիսէ և ընդ. Գարստիկը:

Վերապահութեամբ կ'ըսենք թէ՛ ժողովը որոշած է Ապրիլ կիսուն կատարել տալ Սուրիական ընտրութիւնները:

Միւս կողմէ կը լսենք թէ՛ Ռ. Գոմիսէրուսի Պատուիրակները ժողով մը պիտի գումարեն նախագահութեամբ Մ. Բոմիսէի, խորհրդակցելու համար այն միջոցներուն շուրջ որոնք պիտի կիրառուին ընտրութեանց միջոցն:

ՔԵՍԱԿԻ ԶՈՒՐԵՐԸ

Քէսապցիները վերջապէս ազատուեցան ամառ ու ձմեռ իրենց շուրհերը ձեպել Ագրայէն բերդէ: Կարգ մը անձերու ջանքերով կարելի եղած է շուրհը լեռնէն խոզովակներով գիւղը իջեցնել և չորս աղբիւրներէն հոսեցնել, որով ամբողջ գիւղի բնակչութիւնը սկսաւ առատօրէն օգտուիլ այս ջուրէն:

ՕՐՈՐՈՒՄԻ ԿՆՃԻՐԸ

ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԸ ԶԻՐԱՐ Կ'ԱՄՏԱԿԵՆ

Որոշուած է ընդհանուր ժողով մը գումարել Ա. հաշտեցնելու համար երկու հակառակորդ կողմերը: Բ. նոր ընտրութիւն կատարել, անյաջողութեան պարագային ընդունիլ Երուսաղէմի, Աղէքսանդրիոյ եւ Պոլսոյ պատրիարքներու օրոշումը: Հաշտեցնելու համարի եպիսկոպոսները Թրիփոլի մէջ յարձակած են Մէլէթիոս եպիսկոպոսին վրայ և ապտակած են զայն:

ԶՄԵՌՈՐ ՀԱՐԱԻ. ՍՈՒՐԻՈՅ ՄԷՋ

Տեղացող առատ ձիւնի պատճառաւ Դամաս-Պէյրուս ինքնաշարժի ճամբաս փակուած էր, իսկ Կիրակի երթեւեկը սկսաւ: Երկաթուղիի ընկերութեան ջանքերով կարելի եղած է ապահովել երկաթուղիներու գնացքը:

ՌՈՒՄԻ ՊԱՅՅՈՒՄ ԹՐԻՓՈՒԻ ՄԷՋ

Իրաւիքի ա կինը Սարա, քաղաքի շուրջ պտոյտ մը կատարած ատեն ուռմը մը գտած են:

Կարծելով թէ թանկարժէք գանձ մը պարունակող հնութիւն մ'է՛ կ'սկսին մուրհով կտորել և մէջինները խորացնելով հարստանալ:

Սակայն մուրհի առաջին հարւածին ուռմը կը պայթի և այր ու կին կտոր կ'ըլլան:

Կը կարծուի թէ այդ վայրը գործածան շրջանին Անգլիական բանակատեղի ըլլալով այդ ուռմը մուրհուած է հոն:

ԵՐԵՎՆԻ ԴՆԻՊՈՍԻՏՈՍԵՐ

Մուսուլի քարեղի հանքերուն շուրջ ուսումնասիրութիւն մը կատարելու համար, Ամերիկայի, Անգլիոյ և Ֆրանսայի Պոլսոյ հիւպատոսները Դամասկոսի ճամբով Պաղատա մեկնեցան:

«ԱՋԴԱԿ»Ի ՈՒՆԵՑԱԾ

ՄԷԿ ՀԱՏԻԿ ՏՊԱԳՐԱԿԱՆ

ԶԵՆՔԻ ՄԵՔԵՆԱՆ ԳՐԱԴՈՒՄԸ

Կը լսենք որ՝ «Ագրակ»ի Տնօրէն Հ. Պալեան չէ կրնալով վճարել Իկ. Բէհեմեանին իր ունեցած պարտքը, այս վերջինը դատարան դիմելով Հիշմի տակ առնել տուած է Պալեանին ունեցած միջոցներէ մէկ հատիկ ձեռքի մեքենան, որ ամայս 21ին Շարաթ օր ժամը 10ին առուրդի պիտի հանուի:

ԽԱՂԱՂ ՑՈՅՑ ՄԸ

ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԷՋ

Արաբական միացեալ Մեծն Մուրիոյ անկախութեան տօնին առթիւ ամայս Տին Դամասկոսի մէջ շուկաները փակ մնացին:

Դպրոցները թէ՛ քաջ էին սակայն աշակերտութիւնը դպրոց չէր յաճախած:

ՀԱՆՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Հաշտեցնելու ժողովուրդը գեղոյ ըլլալով ներքին տուրքի գումարներէն բազմաստորագիր հանրագրութիւն մը ներկայացուցին կառավարութեան:

ԿԱՐԴԱՅԷՔ

ԵՒ ՏՂԱՄԵՏԵՔ

«ԼԻԲԱՆ»-Ի ՀԱՅԱՍՏԱՆԻ

քանալին: Եւ մինչ գործուորը իր ունեցումը վրայ առնելով ծրարը, հառա՛ մը արձակեց Պ. Լիւնիէր հանձնարեղ եղանակով մը վերսկսաւ:

— Պէլճէկօրի հետ վայաւանքուր քանքը քանքը գործանանք: Ետտ աւելի ապահով է և ոչ այնքան արհամարհելի:

Կուզը հրեց գուրը, և զայն կրկին գոցել յետոյ իրենց ետեւէն, կոճակ մը գարձուց: Ելէքաւրական լամբ մը վառեցաւ լուսաւորելով սանդուղ մը որ գետնին տակը կը խորսուողուէր:

— Պատուը, ծիծաղեցաւ Պ. Լիւնիէր, չէ գոհացած վերականգնելով այս հիւսուելոց զգեսկը... Ուզած է նաև որ ան կազմակերպուի արդիական բուրձր յարմարութիւններով:

Երկուքն ալ իջան աստիճաններէն և հասան ներքնայնք մը որ կը վերջանար վանդակորմով մը բաժնուած փոքրիկ սենեակով:

Կուզը սենեակը իր ընկերոջը ցոյց տալով, ըսաւ:

— Դիւանակին նախկին բանտերը:

Տրցակէն խոշոր բանալի մը հանեց և անցնելով զայն յաղթ փականքին մէջը որ կը գոցէր վանդակորմը, բացաւ զայն... Յետոյ կրկին ելէքաւրական կոճակ մը գարձուց:

Պէլճէկօրի երկու օգնականները գմբթաձեռ սենեակի մը մէջ կը գտնուէին, որ կը լուսաւորուէր պատէն կախուած բազմաթիւ ցուցակէ լազաքներով:

Սենեակին խորը կանգնած էր տեսակ մը աշխատակերպարանքով վառարան մը: Պատերէն միայն վրայ հաստատուած էր բազմաթիւ զապանակներով յարգաւորուած ճիւղաւորական տախտակ մը:

Երկաթէ հոյակերտ սիգապանծ վանդակորմէն և ընդարձակ պատուոյ բակէ մը անցնել վերջ կը մշտնուէր զրահներով ու արձաններով զարդարուած պահակներու սրահը, որուն խորէն կը բարձրանար զոյգ շրջանով խիստ գեղեցիկ սահմանը մը, որ կը տանէր առաջին յարկի ընդարձակ գաւիթը՝ որուն պատերը զարդարուած էին գեղեցիկօրէն:

Այս գաւիթը կ'առաջնորդէր գեղեցիկ գործուածքներով Լուզովիկոս 15րդի ճաշակով կահաւորուած հոյակապ դահլիճ մը, ուր՝ բազմաթիւ թանկարժէք կարասիներու կողքին՝ կային նաև վարպետներու հագուազիւտ իւղաներկ նկարները: Իսկ տախտակամածը ծածկուած էր մեծաշուք գորգով մը:

Այս իսկապէս հրաշալի սրահը ուղղակի կը հաղորդակցէր հսկայ գրասենեակի մը հետ, որուն չորս կողմերը զարդարուած էին դարակներով, որոնք ինչին հազարաւոր հատորներով, որոնցմէ շատերը հոգակաւոր հեղինակներու անունները կը կրէին:

Այդ օրը, սոյն սրահին մէջ՝ պատուոյ Բաբիլոնի կողմէ այդ բոլոր հարստութիւններու վրայ իբր հրահրէր զորուած մարդը նստած էր Լուզովիկոս 13րդի ունով սեղանի մը առջև, որուն վրայ ուղղանկէս ձեւով և կարմիր մեղրամոճով բազմաթիւ կնիքներով գրաշուած կտաւապատ ծրար մը կը հիշար:

Արդ, այդ անձնաւորութիւնը ուրիշ մէկը չէ՛ր: Եթէ ոչ խորհրդաւոր Կուզը, Պէլճէկօրի արքանեակներէն մին:

Միւս ընկերը, այսինքն գործաւորի հագուստով մարդը, քաւքիթ ձեռքի ոտքի կեցած էր գրասենեակին մօտ:

Անոնց գիմարը, զոնապան մը յարգալի կերպարանքով մօթի կ'ընէր Կուզին տուած հրամանաւ:

Օդային Սպասարկութիւն

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

Երեւան 14-3-931. — Հայաստանի կառավարութիւնը պահանջեց որ Ազգականացիները իրենց պատասխանատու ներկայացուցիչը (մուխթար) ընտրեն

— Կառավարութիւնը վաւերացուց քաղաքացի Մեղրունիի ընտրութիւնը:

— Ազգականացի մէջ Ռուսական կեղծ քրքարամեւեր ձեռնացուցան:

Ուսկիանութիւնը խուզարկելով քաղաքացի Մեղրունիի բնակարանը, երեւան հանեց մեքենայ մը եւ 50-100-150 ռուբլիոց կեղծ քրքարամեւեր:

Մեղրունին ձեռնակալուեցաւ:

Պէյրուս-Քէմը. 14-3-31. — Բուռն կերպով կը բողոքենք **Ա.Զ.Գ.Կ.** ղէմ որ ինքզինքը կը ներկայացնէ՝ հասարակաց եւ մասնաւորապէս կարծիքը եղող բերք:

Անիկայ կրնայ ըլլալ կազմակերպութեան մը խողովակը սակայն հասարակութեան՝ երբէք:

Բարիք, 14-3-31. — Ստացանք Բրեքէն փողոցէն **«commande»** քանակութեամբ Բահանայով սկսաւ զատարարութեանց **stop** Բրեքէն ուսանելու մեծ փափակ կայ **stop** մինչեւ այսօր հազարէ անցի երկսեռ դիմողներ եղան **stop** մանրամասնութիւնք փոքրաշուք:

Ուսանողներու Սենսիթ, 14-3-31. — Բացարձակապէս սուս է ուսանողներու կազմակերպած ցոյցին առիթը «Ազգական» հանդէպ ցոյց տուած համակարգը:

Մեքէ կ'անգիտանանք նոյն իսկ «Ազգական» անուն քերթի մը գոյութիւնը եւ անոր սպարանին ո՞ր, ո՞ր տեղ գտնուի:

Երեւան, 14-3-11 կէս գիշեր. — Մեղրունիի դատարարութիւնը վերջացաւ: Կեղծարարը Սիւրբ ամբողջուեցաւ:

Անճախներաց Նուագահանդէս

Կազմակերպուած ՀԱՅԿ.ԲԱՐՍԵՒԷՆԴԶ. ՄԻՈՒԲԵԱՆ

ՔԵԼԷԿԵԱՆ — ՍԻՍՈՒԱՆ ՈՐԲԱՆՈՑԻ ՈՐԲԱՆԶԻՆԵՐՈՒ Կողմէ

20 Մարտ 1931, ուրբաթ երեւոյթ, ժամը 8.30 — Ինչ Հայ Բաղնախանաց Եկեղեցիին մէջ, կազմակերպուած Հ. Բ. Ը. Միութեան ՔԵԼԷԿԵԱՆ Սիսուան Որբանոցի Սանտիֆիկացի Կողմէ, նախագահութեամբ Գեորգ. Տ. Բարսեւեան Եպս. Կիւլեւեանի, Կար. Արքեպիսկոպ Մեծի Տանն Կիլիկիոյ:

Առաջին անգամ ըլլալով, Պէյրուսի մէջ, Հայ Որբանոցներ կազմուած ժամանակ, իր բոլոր մասերով, պիտի հրամցնէ ազգային եւ օտար ամենաբնօրէն կողմեր, պիտի ըլլան փառանքեղ երգեր եւ մեներգեր, սանտիֆիկացի Կողմէ:

Պատրաստուեցէք ներկայ ըլլալ. վայելելու համար գեղարուեստական ընտրիչ մեր որբանոցներուն եւ ֆայակերելու զանոնք:

= 146 =

Ներքո:

Այս վերջինը, ձայնով մը, որ անմիջապէս երեւան կը հանէր տանը մէջ անոր ունեցած զիրքը, կ'ըսէր:

— Գաղտնի թագաւորներուն խանդավառ հետեւանքով, պարտնէր հրամայած է արդիւն ունէ այցելուի մուտքը զղեակէն ներս:

— Ծառ լաւ, Պր. քարտուղար, պատասխանեց զոնապալը խանդակելով:

Գործաւորի կազմակերպող մարդը ցոյց տալով աւնոր, կուզէր շարունակել:

— Պարտնէր մասնաւոր գործաւոր մըն է զոր Բարիքէն հետս բերի, եւ որ իմ ներկայութեանս նորոգութիւններ պիտի կատարէ:

Յետոյ, ձիգով մը, աւելցուց:

— Ուշադրութիւն ըրէք, նայեցէք որ ունէ մէկը մեզ չը խանդարէ աշխատութեանց կատարուած ընթացքին:

Եւ հրամայողական շնորհով մը ճամբեց զոնապալը, որ տնայապարեց հեռանալ:

Կուզե՞ն ու գործաւորը առանձին մնացին... վայրկեան մը անոնք լուռ կեցան:

Գործաւորը որ ոչ իր խօսակցին հաւատարմութեանը եւ ոչ ալ հեղինակութիւնն ունենալ կը թուէր, առաջինը եղաւ լուռութիւնը խողով:

— Ուրեմն, ըսաւ ան, Պր. Լիւիսէր, կը հաւատարմութիւն մը չենք փոխադրել:

— Նոյնիմանք փոքր հոգ, պատասխանեց կուզէր կատարել ալ հանգարտութեան մը երեւոյթովն ու շնորհով:

Եւ աւելցուց:

— Բարեկցութիւնը Սեպտեմբերէն տալ էր երբէք

LE DANUBE

SOCIÉTÉ ANON. D'ASSURANCES GÉNÉRALES

Fondée à Vienne en 1867

Տ Ա Ն Ի Ի Պ

Ընդհանուր Ապահովագրական

Անճախներաց Ընկերութիւն

Հիմնադրուած 1867-ին

ԴՐԱՄԱԳԼՈՒԻՆ ԵՒ ՊԱՆԵՍԻ ԴՐԱՄ	Ոսկի Զրք.	36,000,000
ԱՊԱՀԱՂՈՒՄՈՒ ԴՐԱՄԱԳԼՈՒԻՆ	»	218,000,000
Բ ՀԻՄԵՆԱԿԱՆԻՆ ԻՎԵՐԼԱՍԻՆԱՅՈՒՄ	»	388,000,000

Տ ա ն ի լ ա յ ի

Աւստրիական արհեստագործութիւնը, ամենամասնաւոր ապահովագրութիւնը կ'ապահովեն կեանքի եւ արհեստի ապահովագրութիւններ, ինչպէս նաեւ արհեստի ներհանրով ամբողջական եւ մասնակի անկարող վիճակի մէջ գտնուողներուն եւ հիւանդութեան ներհանրով անկարող անձանց ապահովագրութիւններ:

ՏՊԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆ

Պուրճ - Իթալի Գողց թիւ 9 = Պէյրուս

Կը պատրաստուին՝

ԴՊՐԱՅԱՆ ՊԻՏՈՒՄԵՐԻՆ — Տեղաւոր, Դրք (զարգացական, զրա կան ու վրայական):

ՀԱՅԵՐԵՆ, ՅՐԱՆՍԵՐԵՆ Եւ ԱՐԱՐԵՐԵՆ — Երգչուհիներ. կատարած են Տպագրական կամ Հրատարակական, ամէն տեսակ գործեր երբեք լեզուներով, նաեւ առեւտրական ամէն տեսակ գործեր ինչպէս նաեւ Հարսանեկան Հրաւիրագրեր:

Տուփի գործատու

Կը պատրաստուին: Ծաքար, Լոգուսի, Ծաքարի, Կոշիկի, Դեղարանի, Ծաքարի ԱՄԷՆ Տեսակ տուփեր քաղցր եւ պատկերներ:

Յոյժ դիւրամատչելի պայմաններ եւ խնամաւոր նշանակում գործ:

ՏՕՔԹ.Ա.ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՎԿԱՅԵԱԼ ՄԱՍՆԱԳԵՏ

Ներքին, կամանց, մանկանց, աչի եւ վեներական հիւանդութեանց ՎԵՐՋԻՆ ՄԷԼՈՑՆԵՐՈՎ ԿԸ ԴԱՐՄԱՆԷ

Հին եւ նոր ջերմամիզութիւնը, Սիւնի-Սըր,

Չորեքսարի օրերը ձիւ

Իրգարմանաւորը կը գտնուի Սէն Լու փողոցը (Երեւանի):

= 147 =

հոս չեն գար:

— Բայց ծառաները, գիտե՞լ տուաւ միտք:

— Ես կ'երաշխաւորեմ, ըսաւ կուզէր ձայնով մը

որ ունէ պատասխան չէր ընդունել:

Եւ սեղանին վրայ դրուած բանակներու տրցակ մը առնելով, նշան ըրաւ իր արանակներն առնելու համար ծրարը: Գործաւորը կոնակը առաւ զայն եւ հետեւեցաւ կողքին:

Երկուքը միասին մասնաւորապէս կուրս ելլելով, սեղանատուէն սեցան եւ կ'աշխատէին:

Պ. Լիւիսէր, որմաթուղթով ծածկուած փոքրիկ դուռ մը ուղղուեցաւ... Եւ մինչ տրցակին մէջէն բանակ մը կ'ընտրէր, գործաւոր մարդը իր բոլոր կարասիքի մը վրայ դրաւ... յետոյ, ակնարկէր իր շուրջը պտուղացուց, զարմանքով ու ցանկութեամբ մանրամասնելով իր շուրջը կուտակուած հրաշալիքները:

Քանի մը երկվայրկեան զայն դիտելէ յետոյ, կուզէր հեգնանքով լի ծիծաղով մը ըսաւ:

— Կը կարծես թէ այստեղ լաւ գործ կայ կատարելիք:

— Եւ որքան...:

— Երկարատեւ խորհած եմ ատիկա, յայտարարեց հնազանդ քարտուղարը... Բայց զժախտարար անկարելի է այդ:

— Ինչո՞ւ համար:

— Որովհետեւ այս գեղարուեստական առարկաները, եւ այս նկարներն ու կարասիները ցուցակարգուած ու ծանօթ են բոլոր հնազանդներուն... Եւ անմիջապէս երեւան կ'եկէ:

— Ուրեմն չեմ պնդէր,

կուզէր, փոքրիկ զրան փականքին մէջ մտցուց

ՆԵՏԱՔՐԵՐԱԿԱՆ ՆՕԹԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՂՐԱՆԵՐ

Ուշադրութիւն մօտեցրէ մասնաւոր վայրի մը մէջ, հսկայ մեղուններ կը պահուին որոնք իրենց մեծութեան համեմատութեամբ մեղր կը լինեն: Այս մեղունները սովորականէն շատ երկար կ'ենթիմեն ունին, զօրաւոր թեւեր եւ խոշոր փոր:

Սկզբին փեթակի մը մէջ գտնուած են այս հսկայ մեղունները: Կարելի հազարի շաւի, որոնք օրական 10-15 ժամ մեղր կ'արտադրեն: Այս մեղունները վայրի են եւ կը սիրեն առանձին ապրիլ: Զանոնք զըրաւելու եւ ընտանեցնելու համար, փեթակներուն քով արհեստական ծաղիկներ չ'ընտան են որոնց թերթերը զանազան վառ գոյներով ներկուած են: Այս ծաղիկներուն վրայ օշարակ կը կաթնեցնեն ամէն առտու մեղուններուն իբր խայծ:

Փորձելու յաջող արդիւնք ըսկած են տալ եւ յոյս կայ որ շուտով հսկայ փեթակներն պիտի լինին մեղուններով, եւ մեղրը թիւրով պիտի հանուի:

— Մուրիոյ մէջ գտնուած մը կայ որ շարաթը միայն վեց օր կը հոսի իսկ եօթներորդ օրը, այսինքն կ'ընտրէ օրը, կը զաղթի հոսել:

— Պէյրուսի Անտոն անունով երկու տարեկան աղջիկ մը երեսուն տարեկը երգեր կ'ընայ գոց երգել:

— Նապաստակը չի կրնար քաշել: Ան կամ կը վազէ եւ կամ կը ցատկէ:

— Հալիփուտի աղջկաններն մէկը «չորս» ոտքէն աքաղաղ մը ունին:

— Առաջին թերթը տպուած է 1615-ին Գիւրմանիոյ մէջ:

— Առաջին անգլիկներն օրաթերթը տպուած է 1702-ին կնոջ մը կողմէ:

— Վերջերս «Երեւան» մը հնարուած է, որ միայն կը լուսի երբ գործէր «Գողցիկ» վրայ դնես: Այս գործը պիտի գործածուի «Փոլոյ» մըն: Հրեականներն ինչպէս նաեւ հիւանդանոցներու մէջ:

— Պուրջիկի մէջ հաց ստանալու համար կարգի սպասող աղջատ օրիորդ մը յանկարծ մեռած է: Քննութիւնէ մը վերջ երեւան եկած է որ այս օրիորդը 5000 տղար ունէ եղբւր զրամատան մէջ:

Փնտրեցէ՛ք ամէն տեղ

իր նմանը չ'ունեցող

«ԲԻԻԲԵՐ»

Հոս Գերմանական գաւթաւոր

Սուրբոյ եւ Լիւանանի

Միտակ ներկայացուցիչ

Մ. ՏԱՐԱՍԵԱՆ

10 Սուրբ - Սուրբ

Պէյրուս

Տպագրական եւ Տուփի գործեր ունենալ առանց վարանելու դիմեցէ՛ք «Լիբանան» տպարան:

ՄԵՐ ԲԱՐԱՆՈՐԴԱՆԵՐՈՒ

«Լիբանան» յարգելի բաժանորդներէն կը խնայուի իրենց բաժանորդագրութեան հաշիւը մամիլ:

Ատամնարոյժ

ՏՕՔԹ. ՄԱՐՏԻՐՈՍ ՊԱՐՈՆԵԱՆ

Կատարելա խղճամտութեամբ կը զարմանէ. ԱԿՈՒՍԻ Եւ ԲԵՐԵՆԻ հիւանդութիւններ, Եւ կը շինէ ռուկէ ռուկէ ամէն տեսակ ակտաններ:

Հասցէ՝ ԲԻԻ ԲԱՍՄԵՐՈՐ

Պէյրուս (Նիւ Իսթ Լիկի Կից)

ԼԻԲԱՆԱՆ ԳԸ ԾԱՄՈՒՐ

Անանեան Դրատուն Պէյրուս

Մ. Նաւարեան

Տեղեկան Գրատուն «ԲԵՐ»

Բարեկց Ծախեան Դատարան